

## Արձանագրություն N 1/142

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ-ի  
փետրվարի 20 -ի նիստի

### Օրակարգ

1. Քննաշրջանի արդյունքների ամփոփում /զեկ.՝ պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Ատենախոսության թեմաների հաստատում /զեկ. դոց. Խ. Գալստյան/:
3. Աշխատությունների հրատարակության երաշխավորություն/զեկ.՝ դոց. Խ.Գալստյան:
4. Պրոֆեսորի կոչման համար ՀՀ ԲՈՀ-ի սահմանված կարգով մրցույթին մասնակցության երաշխավորության հարցը /զեկ.՝ դոց. Խ. Գալստյան/:
5. Ընթացիկ հարցեր:

### Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.  
ա/ ԵՊՀ հայցորդ Աննա Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Տեղեկատվական գործոնը դարաբաղյան հակամարտության փոխակերպման և կարգավորման գործընթացում», ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Մարգարովին:
- բ/ ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի նպատակային, հեռակա ուսուցման ասպիրանտ /Արցախի Պետական Համալսարան/ Ալվարդ Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Ջրային ռեսուրսների գործոնը էթնոքաղաքական հակամարտություններում/ Ղարաբաղյան եւ արաբա-իսրայելական հակամարտությունների օրինակով, ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ եւ գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Քեոյանին:
- գ/ ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Հասմիկ Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «ՀՀ սահմանադրական բարեփոխումների շուրջ ընթացող քաղաքական դիսկուրսը», ԻԳ.00.02

«Քաղաքական ինստիտուտներ եւ գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Մարգարովին:

դ/ԵՊՀ հայցորդ Ստեփան Հասան-Ջալալյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Քաղաքական մշակույթի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները Արցախում», ԻԳ.00.01 «Քաղաքական մտքի պատմություն եւ տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ.Մանուչարյանին

ե/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների եւ դիվանագիտության ամբիոնի առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Ալեքսանդր Միխակի Բասենցյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Բելառուսի հետ 1991-2013թթ..», ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Պետրոսյանին:

2. Երաշխավորել հրատարակության.

ա/ քաղ. գիտ. թեկնածու Արտակ Ջաքարյանի «Կուսակցություններ եւ կուսակցական համակարգեր: Կուսակցությունները ժողովրդավարական քաղաքականության գործընթացում» ուսումնա-մեթոդական աշխատությունը:

բ/ ԵՊՀ Դիվանագիտական ծառայության եւ մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտներ Նունե Մելքոնյանի եւ Արմենուհի Մարտիրոսյանի «Դիվանագիտական գրագրության ուղեցույց» երկրորդ լրամշակված տարբերակը երաշխավորել հրատարակության:

3. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով եւ քվեաթերթիկում գրանցել պրոֆեսորի կոչման համար Աշոտ Ենգոյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն:

Փակ գաղտնի քվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի գիտական խորհրդի 21

անդամներից քվեարկությանը մասնակցել են 19-ը, եւ ձայները բաշխվել են հետեւյալ կերպ՝

**Ենգոյան Աշոտ** – 19 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկներ չկան:

**Խորհրդի նախագահ, պրոֆ.**

**Խորհրդի քարտուղար, դոց.**

**Գ. Պետրոսյան**

**Խ. Գալստյան**